

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 19

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Արաբագիտություն

*Հայկ Բոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ

ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Ա).....7-23

*Սոնա Տոնիկյան*

ՂՈՒՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԲԱԴՐ ԱԴ-ԴԻՆ

ԱԼ-ՉԱՐԿԱՇԻԻ ԵՎ ՋԱԼԱԼ ԱԼ-ԴԻՆ ԱԼ-ՍՈՒՅՈՒՏԻԻ

(«ԱՊԱՑՈՒՅՑԸ ՂՈՒՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

ԵՎ «ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՂՈՒՐԱՆԻ ՄԱՍԻՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ՏՐԱԿԱՏՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ).....24-34

*Սեդա Տիգրանյան*

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ «ՍՈՒՐԲ

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ» ԴԱՎԱՆԱՆՔԻ ՄԵՐԺՈՒՄԸ ԻԲՆ

ԹԱՅՄԻԱՅԻ (1263-1328) «ՔԻԹԱԲ ԱԼ- ՋԱՎԱԲ»

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ.....35-51

*Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

«ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ»

ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ» ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....52-65

*Խաթիջե Ահմադ Մեհրաբի*

ՀԱՎԵԼՅԱԼ ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ ՂՈՒՐԱՆՈՒՄ.

ԼԵԶՎԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....66-76

### Թյուրքագիտություն

*Նաիրա Պողոսյան*

ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ

ՄԱՍՈՒԼՈՒՄ ԽՈՋԱԼՈՒԻ ԴԵՊՔԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ

ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (2021Թ. ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ).....77-86

*Գոռ Հովհաննիսյան*

ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ՌՈՒՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ.....87-92

*Անուշ Բեխյան*

ՄԻՐԻԱՅԻ ՀՅՈՒՄԻՍՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԱՅԻՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....93-104

*Անահիտ Բարսաղյան*

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՉՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՕՍՄԱՆԻՉՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ  
ԱՄՐԱՊԵՆԴՄԱՆ ԳՈՐԾԻՔ.....105-114

*Աստղիկ Պողոսյան*

ԱՀՄԵԴ ԱՂԱՕՂԼՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ  
1920-1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՍՈՒՍԹԱՑԱ ԶԵՄԱԼԻ ՀԵՏ.....115-128

**Իրանագիտություն**

*Արեգ Բազրասյան*

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ  
ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ.....129-144

*Ալեն Հայրապետյան*

ԻՐԱՆԻ ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆՆԵՐԻ ԼԵԶՎԻ ՈՐՈՇ  
ԲԱՌԱՊԱՇՏԱՐԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՈՒՐԶ.....145-156

*Աննա Գևորգյան*

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ. ԳԵՆԵՐԱԼ ՍՈՒԼԵՅՄԱՆԻՆ՝  
ՈՐՊԵՍ ՄԱՐՏԻՐՈՍ.....157-164

*Արման Մաֆայրյան*

ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ՝ ՉԼՍ-ՆԵՐՈՒՄ ՈՒ  
ՍՈՒԼՏԻՄԵՐԻԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՑՈՒՄԱՆ ՇՈՒՐԶ.  
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ.....165-174

**Գրախոսություն**

*Ամայա Պետրոսյան*

Լիլիթ Մովսիսյան. Աղբբեջաներենի դասագիրք, Եվրոպրինտ, Երևան,  
2019, 232 էջ.....175-177

## CONTENT

### Arabic Studies

*Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim*

“PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART ONE).....7-23

*Sona Tonikyan*

QURANIC SCIENCES ACCORDING TO BADR AD-DĪN AL-ZARKASHI AND JALĀL AL-DĪN AL-SUYŪTI (COMPARATIVE ANALYSIS OF TREATISES “THE EVIDENCE IN THE HOLY QUR’ĀN SCIENCES” AND “THE PERFECT GUIDE TO THE SCIENCES OF THE QUR’ĀN”).....24-34

*Seda Tigranyan*

REJECTION OF THE DIVINE ESSENCE OF CHRIST AND THE CONCEPT OF THE HOLY TRINITY ON THE EXAMPLE OF IBN TAYMIYYAH'S (1263-1328) “KITAB AL-JAWAB”.....35-51

*Mohammed Haj Ibrahim*

IMPLEMENTATION OF JUST WAR THEORY FRAMEWORKS ON THE GLOBAL WAR ON TERRORISM.....52-65

*Khadija Ahmad Mehrabi*

SUPPLEMENTAL PREPOSITIONS (HURŪF AL-JARR) IN QURAN: LINGUO-STATISTICAL ANALYSIS.....66-76

### Turkic Studies

*Naira Poghosyan*

REFLECTIONS OF ARMENOPHOBIA IN THE TURKISH MEDIA IN THE CONTEXT OF KHOJALY EVENTS COMMEMORATION (BASED ON THE MONITORING OF THE ONLINE MEDIA IN FEBRUARY 2021).....77-86

*Gor Hovhannisyan*

RUSSIAN MONUMENT IN SAN-STEFANO.....87-92

*Anush Kekhyan*

THE MILITARY PRESENCE OF TURKEY IN THE NORTH OF SYRIA IN THE CONTEXT OF REGIONAL PROCESSES ..... 93-104

*Anahit Kartashyan*

PUBLIC AND COMMUNAL CELEBRATIONS AS A TOOL FOR FOSTERING OTTOMANISM AMONG THE ARMENIAN COMMUNITY OF SMYRNA (IZMIR).....105-114

*Astghik Poghosyan*

AHMET AGHAOGLU'S ACTIVITY IN TURKEY IN THE 1920-30S. COOPERATION WITH ATATURK..... 115-128

### **Iranian Studies**

*Areg Bagratyan*

CENSORSHIP THROUGH THE EYES OF IRANIAN DIASPORA WRITERS .....129-144

*Alen Hayrapetyants*

ON SOME LEXICAL UNITS IN THE LANGUAGE OF ZOROASTRIANS IN IRAN.....145-156

*Anna Gevorgyan*

THE MARTYRDOM IN THE POLITICAL DISCOURSE OF MODERN IRAN. GENERAL SOLEIMANI AS A MARTYR.....157-164

\*\*\*

*Arman Safaryan*

ON THE PROBLEMS OF EDUCATIONAL SYSTEMS OF THE EAEU COUNTRIES AND CHINA IN THE MASS MEDIA AND MULTIMEDIA SPACE: REALITIES AND PERSPECTIVES ..... 165-174

### **Review**

*Amalya Petrosyan*

Lilit Movsisyan. Azerbaijan language. Yevroprint. Yerevan, 2019, 232pp..... 175-177

**ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ «ՍՈՒՐԲ  
ԵՐՐՈՐԳՈՒԹՅԱՆ» ԴԱՎԱՆԱԿՆԸԻ ՄԵՐԺՈՒՄԸ ԻՐՆ  
ԹԱՅՄԻԱՅԻ (1263-1328) «ՔԻԹԱԲ ԱԼ- ՉԱՎԱԲ»  
ԱՃԽԱՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ**

*Քանալի բառեր՝ թահրիֆ, Իսա իբն Մարիամ, Սուրբ  
Երրորդություն, «Քիթաբ ալ- Չավաբ», Իբն Թայմիա*

Իսլամական ավանդույթը մեծ տեղ է հատկացնում Հիսուս Քրիստոսին, բայց մինևույն ժամանակ մերժում է նրա աստվածային էությունը և «Սուրբ Երրորդության» դավանանքը: Իսլամում Հիսուսին անվանում են Իսա, ով հայտնություն ստացած առաքյալներից ու մարգարեներից է: Իսայի վերաբերյալ իսլամական պատկերացումների հիմքը Ղուրանն է, իսկ հաղիսներում տրվում են լրացուցիչ տեղեկություններ, որոնք ամբողջացնում են նրան վերապահված առաքելության էությունն իսլամական ուսմունքում: Սակայն մուսուլմանական հասարակության զարգացմանը և իսլամի տարածմանը զուգահեռ մուսուլման հեղինակները, դուրս գալով միջազգային ասպարեզ, սկսեցին զբաղվել կրոնական հիմնադրությունների համակարգմամբ և փիլիսոփայական իմաստավորմամբ, ինչն էլ հետագա ուսումնասիրությունների շրջանակներում հանգեցրեց Ղուրանով և Սուննայով ամրագրված որոշ հայեցակարգերի ու դրույթների՝ այդ թվում քրիստոնեական ուսմունքների վերաբերյալ իսլամական մեկնաբանությունների փոփոխությունների: Ասվածը վերաբերում է հատկապես հակաքրիստոնեական՝ դեռ վաղ միջնադարից սկսած դավանաբանական բանավեճերին, որոնք թեժացել են մեր ժամանակներում՝ հասկանալի և հավելյալ բացատրություններ չպահանջող պատճառներով: Դրանց շրջանակներում գիտնականներն այս կամ այն հարցին ռացիոնալ պատասխան տալիս հաճախ սուրբ գրքերում հանդիպող այս կամ այն հասկացությունը մեկնաբանում են սեփական տեսակետի կամ առաջ քաշվող վարկածի ապացուցման համար՝ հաճախ հիմնվելով բացառապես տրամաբանական մտածողության վրա: Պոլեմիկ գրականության մեջ հայտնի գիտնականների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում

<sup>1</sup> ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, արաբագիտության ամբիոնի մագիստրանտ, էլ. փոստ՝ seda.tigranyan@ysumail.am

նշանավոր աստվածաբան, տեսաբան, մտածող, իրավաբան Իբն Թայմիան (1263-1328), ով ոչ միայն համակարգել է իր ժամանակաշրջանում գոյություն ունեցող հակաքրիստոնեական պոլեմիկ գրականությունը, այլև առաջ է քաշել իր ուրույն մոտեցումներն ու մեկնաբանությունները՝ այդպիսով առանձնանալով իր ժամանակի մյուս գիտնականներից: Ուստի սույն ուսումնասիրության շրջանակներում քննության կառնենք Իբն Թայմիայի տեսակետները խնդրո առարկա թեմայի առնչությամբ՝ նրա «Քիթաբ ալ-Չավաբ» աշխատության օրինակով համեմատության և համադրական վերլուծության միջոցով ցույց տալով, թե հակաքրիստոնեական բանավեճերում Քրիստոսի աստվածային էության և «Սուրբ Երրորդության» դավանանքի դեմ ներկայացվող հայեցակարգային և փիլիսոփայական փաստարկները որքան են համապատասխանում իսլամական սկզբնաղբյուրներին և Ավետարաններին:

**Թահրիֆի հայեցակարգը և դրա վերաբերյալ Իբն Թայմիայի հայացքները:** Ղուրանում հրեաներն ու քրիստոնյաները համարվում են «Գրքի մարդիկ (արաբ․` أهل الكتاب)» (Ղ. 2: 109, 120, 3: 28, 29, 118, 119 և այլն), քանի որ նրանք մարգարեների միջոցով Ալլահից հայտնություն են ստացել: Մարգարեներից յուրաքանչյուրը հաստատել է նախորդի մարգարեության և փոխանցած հայտնության ճշմարտացիությունը. Ավետարանները հաստատում են Թորան, իսկ Ղուրանը հաստատում և լրացնում է և՛ Թորան, և՛ Ավետարանները (Ղ. 46:12): Իսլամական ավանդույթի համաձայն՝ նախքան Մուհամմադի մարգարեության շրջանը և Ղուրանի գրի առնվելը Թորան ու Ավետարանները ձևավորվել էին որպես աստվածային հայտնություններ, սուրբ գրքեր, որոնցից ցանկացած շեղում մարդկային գործոնի արդյունք է:<sup>2</sup>

Իսլամական ավանդույթի համաձայն «գրքի մարդիկ» չեն հետևել այդ օրենքներին, այլ կեղծել են դրանք կամ թաքցրել (Ղ. 3:78, 5:15): Սուրբգրային տեքստերը փոփոխելու, դրանց իմաստներն աղավաղելու, բառերը տեղափոխելու գաղափարը մուսուլման գիտնականների շրջանում բնութագրվում է «թահրիֆ» տերմինով (արաբ․` تحريف, բառացի՝ աղավաղում, բառերի ու տառերի

<sup>2</sup> Оганесян С.С., Об отношении Корана к Торе и Новому Завету, к иудеям и христианам, Часть 1. Тора, Библия и Коран — три Послания от Единого Бога, <https://cyberleninka.ru/article/n/ob-otnoshenii-korana-k-tore-i-novomu-zavetu-k-iudeyam-i-hristianam-chast-1-tora-bibliya-i-koran-tri-poslaniya-ot-edinogo-boga>



վերադասավորում)<sup>3</sup>, որի արմատը حرف -ն է («հա- ու- ֆա», նշանակում է փոխել, շեղել): Ղուրանում տերմինը չի նշվում, սակայն հանդիպում են վերոնշյալ բառարմատը պարունակող բայեր (Ղ. 2:75, 4:46, 5:13, 5:41), ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ թահրիֆի հայեցակարգը, որպես այդպիսին, ձևավորվել ու զարգացել է մուսուլման հեղինակների հետագա ուսումնասիրությունների, աշխատությունների միջոցով:

Թահրիֆի՝ սուրբգրային տեքստերը փոփոխելու գաղափարն այն առանցքն է, որի շուրջ Իբն Թայմիան կառուցում է իր հակաքրիստոնեական փաստարկները: Քրիստոնյաների՝ իր կարծիքով թույլ տված սխալները մատնանշելով՝ հեղինակը նպատակ է հետապնդում զգուշացնել մուսուլմաններին իսլամից շեղվելու վտանգավորության մասին և, այս առումով անաչառություն ցուցաբերելով, իր քննադատությունը սուր ծայրով ուղղում է նաև իսլամի ներսում ձևավորված ուղղություններին:<sup>4</sup>

Իբն Թայմիայի հակաքրիստոնեական ամենանշանավոր աշխատությունը, որը հանդիսանում է սույն ուսումնասիրության առարկան, կոչվում է «Ճշմարիտ պատասխան նրանց, ովքեր փոխել են Մեսիայի կրոնը»<sup>5</sup> (արաբ.՝ որտեղ ),<sup>6</sup> الجواب الصحيح لمن بدل دين المسيح, ամփոփված են քրիստոնյաների և հրեաների դեմ ուղղված փաստարկների մեծ մասը: Այն գրվել է 1320թ. որպես պատասխան Սայդայի (Սիդոն) մելքիտ եպիսկոպոսի՝ Անտիոքցի Պողոսի<sup>7</sup>

<sup>3</sup> Բառերի և տառերի տեղափոխությունը կամ դրանց փոխարինումը մեկը մյուսով հաճախ անվանվում է նաև թաբդիլ (արաբ.՝ تبديل, բառացի՝ փոխարինել, փոխանակել): Սա ավելի լայն հասկացություն է, որն օգտագործվում է նաև այլ կոնտեքստներում, սակայն Ղուրանում (Ղ. 2:59, 7:162) կիրառվում է որպես հոմանիշ թահրիֆ հասկացությանը: - Ս. Տ.

<sup>4</sup> Առավել մանրամասն տե՛ս Abdullah Ism., Tawhīd and Trinity: A Study of Ibn Taymiyyah's al-Jawāb al Ṣaḥīḥ, Intellectual Discourse, 2006, Vol 14, No 1, pp 91-92

<sup>5</sup> Այսուհետ՝ «Ալ-Ջավաբ»

<sup>6</sup> أحمد بن عبد الحليم بن عبد السلام بن تيمية الحراني. الجواب الصحيح لمن بدل دين المسيح. الرياض، دار العاصمة، 1419 هـ

Այսուհետ՝ الجواب الصحيح ابن تيمية

<sup>7</sup> Սայդայի եպիսկոպոսն իր նամակում տեղեկացնում է Իսլամի և Մուսուլմանադի մարգարեության վերաբերյալ քրիստոնյաների հայացքների և տեսակետների մասին, որոնց նա ծանոթացել է դեպի բյուզանդական կայսրություն, հարավային Իտալիա, Կոստանդնուպոլիս ճանապարհորդության ընթացքում այդ շրջանների առաջնորդների հետ հանդիպումների ժամանակ: Պողոսն իր նամակը չի ուղղել կոնկրետ հասցեատիրոջ: Նախքան Կիպրոսում վերաշարադրվելն այն շուրջ մեկ դար շրջանառության մեջ է եղել մուսուլման աստվածաբանների շրջանում: 13-րդ դարում պատասխան շարադրանքով հանդես է եկել եգիպտացի իրավագետ Շիխաբ Ալ-Դին Ահմաբ բն Իդրիս Ալ-Զարաֆին: Նրա «Հիասքանչ պատասխաններ արատավոր

«Նամակ մուսուլման ընկերոջը» վերնագրով կարճ տրակտատին: Սակայն Իբն Թայմիան պատասխանել է նամակի ոչ թե օրիգինալ տեքստին, որը շուրջ մեկ ու կես դար արդեն շրջանառության մեջ է եղել, այլ Կիպրոսում անհայտ քրիստոնյա աստվածաբանի կողմից վերաշարադրված տարբերակին (Նամակ Կիպրոսի ժողովրդի կողմից): Անհայտ հեղինակը նամակի տեքստը ենթարկել է փոփոխությունների, հարստացրել է Ղուրանից ու Աստվածաշնչից մեջբերումներով, փոխել է շարադրանքի ոճը՝ առավել մեղմ տոն հաղորդելով դրան:<sup>8</sup> Իր աշխատության մեջ նախքան հրեաներին ու քրիստոնյաներին քննադատելը իբն Թայմիան խոսում է իսլամի համամարդկային բնույթի մասին, ապա անդրադառնում է սուրբգրային տեքստերի աղավաղման խնդրին, մանրակրկիտ կերպով քննության է առնում Երրորդության ուսմունքը և վերջում, ամփոփելով ամբողջը, խոսում է մաքուր իսլամին հետևելու կարևորության մասին:

Իբն Թայմիան առանձնացնում է Ավետարանների աղավաղման պատճառ հանդիսացող մի շարք գործոններ: Դրանցից մեկը Ավետարանների՝ Իսայի համբարձվելուց հետո միայն գրի առնվելու փաստն է: Իբն Թայմիան Ավետարանները նմանեցնում է Մուհամմադ մարգարեի խոսքերի և արարքների մասին ականատեսների փոխանցած պատմություններին՝ հադիսներին, որոնք հավաստիությամբ և կարևորությամբ միանշանակ զիջում են Ղուրանին:<sup>9</sup> Հետաքրքրական է, որ Իբն Թայմիան, ի տարբերություն մյուս գիտնականների, ոչ թե ժխտում է Ավետարանների՝ կրոնական գիտելիքի աղբյուրներ լինելու հանգամանքը, այլ դրանց տալիս է երկրորդական նշանակություն՝ նմանեցնելով հադիսներին, և գտնում, որ դրանց ճշմարտացիությունը ապացուցման կարիք ունի:

հարցերին» (արաբ․ *الأجوبة الفخرية عن الأسئلة الفاجرة* ) աշխատությունն իր ժամանակների հակաքրիստոնեական համապարփակ գործերից է: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Zwirahn F., *Typologies and Argumentation Tactics in Religious Polemics An Analysis of al-Jawāb al Ṣaḥīḥ and the Cyprus Letter*, Near Eastern Studies Department, Princeton University, United States, 2018, <https://pdfs.semanticscholar.org/a174/c5dcc8d4428026ed31e6769d1c3d25a83cce.pdf> , pp 50-52

<sup>8</sup> Կիպրոսցի աստվածաբանը վերաշարադրված նամակի երկու օրինակ ուղարկում է Դամասկոսի երկու մուսուլման գիտնականների՝ Իբն Թայմիային 1316թ. և Շամս Ադ-Դին Աբու Աբդուլլահ Մուհամմադ իբն Աբի Տալիբ Ալ-Անսարի Ալ-Սուֆի Ալ-Դիմաշկիին 1321թ.: Իբն Թայմիան նույն տարվա ընթացքում գրում է իր պատասխան աշխատությունը: Ավելի ուշ արձագանքում է Ալ-Դիմաշկին իր «Պատասխան Կիպրոսի ժողովրդից ստացված նամակին» (արաբ․ *جواب رسالة أهل جزيرة قبرص* .): Այս մասին առավել մանրամասն տե՛ս Zwirahn F., նշվ. աշխ., էջ 52-54

<sup>9</sup> ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 3، ص. 21-23.

Ըստ Իբն Թայմիայի՝ Ավետարանների աղավաղման պատճառներից է տեքստերը փոխանցողների հստակ շղթայի և դրա արժանահավատությունը պարզաբանող մեթոդների բացակայությունը:<sup>10</sup> Նա քննության է առնում նաև Ավետարանների թարգմանության և տարածման հարցը, ինչը նույնպես պատճառ է հանդիսացել տեքստերի աղավաղման համար: Մակայն, հեղինակի համոզմամբ, դրանց արժեզրկումն առավել շատ պայմանավորված է իմաստների աղավաղմամբ, ինչը տեղի է ունենում տեքստերի սխալ մեկնաբանման և նորամուծություններ մտցնելու հետևանքով: Նորամուծությունների մեծ մասը, ըստ Իբն Թայմիայի, մտցվեցին հռոմեական կայսր Կոնստանտինի գործունեության հետևանքով, ում հրամանով 325թ. գումարվեց Նիկիայի ժողովը: Ժողովի շրջանակներում ընդունվել է քրիստոնեական ուղղափառ դավանության հիմնական դրույթները պարունակող Նիկիական հանգանակը,<sup>11</sup> ինչի մասին բազմիցս խոսվում է «Ալ-Ջավաբում»:<sup>12</sup>

**Հիսուսի աստվածային էության և Երրորդության ուսմունքները որպես թահրիֆի հետևանք: Դրանց դեմ բերվող հակաքրիստոնեական փաստարկները:** «Ալ-Ջավաբը» պարունակում է հարուստ տեղեկատվություն իսլամի, քրիստոնեության, ինչպես նաև դրանց ներսում ձևավորված բազմաթիվ ուղղությունների ու հոսանքների մասին: Իբն Թայմիան ցուցաբերում է խորը գիտելիքներ քրիստոնեության տարբեր ճյուղերի, ուղղությունների ուսմունքների և դրանց տարբերությունների մասին և նշում է, որ դրանք բոլորն էլ համակարծիք են այն առնչությամբ, որ Քրիստոսն աստված էր, Աստծո որդի: Ուստի մերժում է այդ ուսմունքները, նշելով, որ դրանք անհիմն են և չեն բխում սուրբգրային տեքստերից, և իր քննադատություններն ուղղում է ոչ թե առանձին հոսանքներին, այլ ընդհանրապես քրիստոնեությանը:<sup>13</sup>

Երրորդությանը և Քրիստոսի աստվածային էությանը վերաբերող քննարկումները Իբն Թայմիան բաժանում է վեց մասի.

<sup>10</sup> Նշվ. աշխ., էջ 14, տե՛ս նաև՝

ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 2، ص 395-398

<sup>11</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Encyclopaedia Britannica, <https://www.britannica.com/topic/Nicene-Creed>

<sup>12</sup> Տե՛ս, օր.՝

ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 2، ص 399-400

<sup>13</sup> Roberts N., Reopening the Muslim-Christian Dialogue of the 13th-14th Centuries: Critical Reflections on Ibn Taymiyyah’s Response to Christianity, The Muslim World, No. 3-4 (1996), Al-Bayt University, Mafrag, Jordan, 1996 p 345

ներկայացնում է Երրորդության փիլիսոփայական կողմը, անդրադառնում աստվածային հիպոստասների քննարկմանը, Աստծո խոսքի մարմնավորմանը Քրիստոսի մեջ, Աստծո մարմնավորմանը Քրիստոսի մեջ, ներկայացնում է Իսայի մասին դուրանական ուսմունքը և անդրադառնում Աստծո և արարածի միավորման հարցին:

Երրորդության փիլիսոփայական բացատրությունը: Երրորդության ուսմունքն Իբն Թայմիան համարում է նորամուծություն, որ հորինել են քրիստոնյաները: Այն չունի հիմքեր և չի կարող հիմնավորվել սուրբ գրքերով: Իր աշխատության մեջ Իբն Թայմիան մեջբերում է Անտիոքի եպիսկոպոսի նամակում Երրորդության ճշմարտացիությունն ապացուցող հիմնական փաստարկները և փորձում ցույց տալ դրանց անհիմն ու երկիմաստ լինելը: Մասնավորապես անդրադարձ է կատարվում հետևյալ հայտարարությանը. «Մուսուլմանները մերժում են մեր հավատը Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն... Եթե նրանք հասկանային, որ այդ խոսքերով մենք նկատի ունենք, որ Աստված ապրող և խոսող է, ապա չէին մերժի մեր հավատը»:<sup>14</sup> Իբն Թայմիան որպես պատասխան նշում է, որ քրիստոնյաները երեք հիպոստասները միայն ներկայացնում են փիլիսոփայորեն, սակայն գործնականում պաշտում են երեք աստվածների: Երեք հիպոստասների ուսմունքն սկիզբ է առել Ավետարաններից, որտեղ Քրիստոսն ասում է. «Ուրեմն գնացեք և բոլոր ազգերի մեջ աշակերտներ պատրաստեք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Ոգու անունով...» (Մատթեոս 28:19): Իբն Թայմիայի համոզմամբ Ավետարաններում հանդիպող միակ հատվածն է, որը կարելի է հիմք ընդունել Երրորդության համար:<sup>15</sup> Սակայն հեղինակն այն մեկնաբանում է այլ կերպ՝ նշելով, որ Իսայի վերոնշյալ խոսքերն իրականում հորդորում են մարդկանց հավատալ Աստծուն, նրա ուղարկած մարգարեին և հրեշտակին, ում միջոցով Աստված ուղարկել է հայտնությունը:<sup>16</sup> Այնուհաստ է, որ Քրիստոսի խոսքերի նմանօրինակ մեկնաբանությունը Իբն Թայմիան համապատասխանեցնում է Ղուրանին և իսլամում հավատի հիմքերին:

Ղուրանում կան մարգարեների հետ պատահած հրաշքների, գերբնական երևույթների վերաբերյալ պատմություններ, ինչպես

<sup>14</sup> Paul's Letter to the Muslims, <https://www.researchgate.net/publication/268216125>, p 9  
«Ալ-Ջավաբում» տե՛ս օր.՝

ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 3، ص-182

<sup>15</sup> Նշվ. աշխ., էջ 183

<sup>16</sup> Նշվ. աշխ., էջ 197

օրինակ մարգարե Իսայի հրաշքները, որոնք արտառոց են և դուրս են մարդկային տրամաբանությունից: Իբն Թայմիան, լինելով բարեպաշտ մուսուլման հավատացյալ, չի կարող հերքել այդպիսի պատմությունների իսկությունը, այդ դեպքում ինչպե՞ս է մեկնաբանում մարդկային հասկացողությունից դուրս այդ երևույթների հնարավոր լինելը: Իբն Թայմիան այդ հասկացությունը փորձում է վերացնել՝ նշելով, որ հարկ է տարբերել, թե որ երևույթներն ու հասկացություններն են, որ մարդկային մտածողությունն ունակ է ընկալելու և ապացուցելու դրանց սխալ ու անհնար լինելը, և որոնք են, որ մարդկային միտքը, բանականությունը պարզապես ունակ չէ ըմբռնելու, քանի որ չկան համապատասխան գիտելիքներ ու պատկերացումներ դրանք ժխտելու կամ հաստատելու համար: Իբն Թայմիան հնարավոր է համարում այն, որ մարգարեների փոխանցած որոշ պատմություններ ու դրույթներ կարող են դժվարընկալելի լինել մարդկային մտքի համար, սակայն դրանք ոչ մի դեպքում չեն կարող անտրամաբանական լինել, ինչպես օրինակ Ղուրանում ու հադիսներում տեղ գտած տարբեր պատմություններ, մինչդեռ երեք հիպոտասաների վերաբերյալ քրիստոնեական ուսմունքը ոչ թե բարդ գաղափար է և Ավետարաններով հաստատվող բացարձակ ճշմարտություն, ինչպես պնդում են քրիստոնյաները, այլ միանգամայն անհիմն է և ոչ տրամաբանական:<sup>17</sup> Այսպիսով՝ հայտնությունները ճիշտ հասկանալու ու մեկնաբանելու վերաբերյալ Իբն Թայմիան գտնում է, որ քրիստոնյաները չեն կարողանում տարբերել ճշմարիտն ու կեղծը, անհեղեթ ու անհնարին երևույթները և մարգարեներին ուղարկված Աստվածային նշանները, նրանք աստվածաբանական հարցերի շուրջ սեփական տեսակետներն են կազմում և պնդում են, որ դրանք բխում են սուրբ գրքերից: Ցանկացած պարագայում Իբն Թայմիան մեղադրանք է ուղղում քրիստոնյաների դեմ. «Եթե նրանք վստահ են, որ իրենց ուսմունքը ճշմարիտ է, և հասկանում են դրա էությունը, ապա պետք է հասկանալի կերպով ներկայացնեն այն, ոչ թե փորձեն ռացիոնալ բացատրություն տալ կամ շեշտել դրա՝ մարդկային մտքի համար անընկալելի լինելը: Հակառակ պարագայում, եթե իրենք չեն հասկանում այն, ինչին հավատում են և ինչը փորձում են մատուցել որպես բացարձակ ճշմարտություն, ապա մեղանշում են Աստծո դեմ, քանի որ աստվածաբանական հարցերի շուրջ պարզաբանումներ են կատարում առանց բավարար գիտելիք ունենալու»:<sup>18</sup>

<sup>17</sup> Նշվ. աշխ., էջ 185

<sup>18</sup> Roberts N., նշվ. աշխ., էջ 351-352

Իբն Թայմիան հանգում է այն եզրակացության, որ Իսայի՝ Աստծո որդին լինելու գաղափարից բխում է, թե Աստված կին ունի, քանի որ ծնունդ տվողը պետք է զույգ ունենա: Նա այդ միտքը համարում է քրիստոնեական ուսմունքի տրամաբանական շարունակություն:<sup>19</sup> Այդպիսով, Իբն Թայմիան, բառացի մեկնաբանելով Քրիստոսի՝ Աստծո որդի լինելու գաղափարը, փորձում է հերքել այն: Այստեղ Իբն Թայմիան որոշակի զգուշություն է ցուցաբերում՝ նշելով, որ Թորայում, Մադնսներում, Ավետարաններում հանդիպում են «Հայր, Որդի» արտահայտությունները, ուստի պետք է ճիշտ մեկնաբանել և չկեղծել դրանց իմաստները: Նա Հայր, Որդի, Սուրբ Հոգի արտահայտությունները մեկնաբանում է հետևյալ կերպ. եթե մարգարեները Աստծո մասին խոսելիս օգտագործում են «Հայր» բառը, ապա նկատի ունեն նրա բարեգթությունն ու ողորմածությունն արարածների, այլ կերպ ասած՝ «որդիների» նկատմամբ, քանի որ Աստված ավելի գթասիրտ է իր ստրուկների նկատմամբ, քան ծնողներն իրենց զավակների: Այստեղից էլ եզրակացնում է, որ Իսայի և Աստծո կապը եզակի ու առանձնահատուկ չէ: Ինչ վերաբերում է Սուրբ Հոգուն, ապա Իբն Թայմիան այն նույնացնում է ոչ թե Աստծո կյանքի, այլ Ղուրանում հիշատակվող շուհ ուլ-կուլուսի (արաբ․՝ روح القدس՝ սուրբ հոգի) հետ<sup>20</sup>: Այսպիսով, անդրադառնալով նամակում տեղ գտած աստվածաշնչյան հատվածներին՝ Իբն Թայմիան դրանք մեկնաբանում է իսլամական ավանդույթին համապատասխան կերպով:

Իբն Թայմիայի՝ Երրորդության վերաբերյալ մեկնաբանություններն ու պարզաբանումները տարբերվում են թե՛ Ավետարաններից, թե՛ Ղուրանից: Այսպես, Ղուրանում և հադիսներում Երրորդության վերաբերյալ հատվածներում Սուրբ Հոգու փոխարեն հիշատակվում է Մարիամի մասին, և քրիստոնյաներին մեղադրում են վերջինիս աստվածացնելու մեջ: Իբն Թայմիան իր աշխատության մեջ չի անդրադառնում Երրորդության մասին Ղուրանական պարզաբանումներին, որոնք, ըստ էության, միանգամայն սխալ են մեկնաբանում ուսմունքի էությունը, նույնիսկ սխալ են անվանում երեք անձերին, այլ, երեք հիպոստասներին նույնացնելով Աստծո երեք ատրիբուտների հետ, իր բանավեճը կառուցում է մեղքիտ եպիսկոպոսից ստացած նամակի հիման վրա՝ հաճախ անդրադառնալով քրիստոնեական տարբեր ուղղություններին

ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 3، ص. 192.

<sup>20</sup> Նշվ. աշխ., էջ 193

և նրանց դավանաբանությանը: Այսինքն՝ տվյալ դեպքում Իբն Թայմիան պարզապես չի անդրադարձել Ղուրանական պարզաբանումներին և առաջ է քաշել սեփական մեկնաբանություններն ու փաստարկները:

Աստվածային հիպոստասները: Իբն Թայմիան մանրակրկիտ կերպով քննության է առնում երեք հիպոստասների վերաբերյալ նամակում տեղ գտած հաստատումները, որոնցից մեկում ասվում է հետևյալը. « Երեք անունները վերաբերում են միակ Աստծուն, ով մշտապես ապրող և իմացող է եղել: Մեզ համար էությունը Հայրն է, Որդին Խոսքն է, Կյանքը՝ Սուրբ Հոգին»:<sup>21</sup>

Իբն Թայմիայի փաստարկները հանգում են հետևյալին.

1. Աստծո ատրիբուտները, անունները բազմաթիվ են, ինչպես դրանց մասին ասվում է Ղուրանում (59:22-24, 7:180, 17:110, 20: 1-8) և հադիսներում, որոնց մի մասի համաձայն Աստված ունի 99 անուն, և դրախտ կգնա միայն նա, ով կթվարկի դրանք:<sup>22</sup> Կան նաև փոխանցումներ այն մասին, որ այդ անուններն ավելի շատ են:<sup>23</sup> Իբն Թայմիան եզրակացնում է, որ Աստծո անունները երեքով սահմանափակելը սխալ է:

2. Իբն Թայմիայի պնդմամբ՝ քրիստոնյաները Հորը համարում են մյուս երկու հիպոստասների սկիզբ, Որդուն անվանում են Խոսք, որ ծնվել է Հորից, ինչպես խոսքը ծնվում է մտքից: Ատրիբուտները, ըստ Իբն Թայմիայի պնդման, Աստծո էության անբաժան մասն են: Եթե Աստվածային էությունը՝ Հայրը, կյանքի և խոսքի գոյության սկզբնապատճառն է, ապա առաջինը գոյություն է ունեցել մյուս երկուսից շատ ավելի վաղ, ինչն Աստծո պարագայում Իբն Թայմիան միանգամայն սխալ և կեղծ պնդում է համարում: Միևնույն կերպով էլ հերքվում է այն պնդումը, թե խոսքը (արաբ․՝ النطق՝ ալ նուտկ ) ծնվել է Հորից այնպես, ինչպես խոսքը ծնվում է մտքից: Սա կնշանակեր, որ խոսքը սկսել է գոյություն ունենալ միայն ժամանակի ընթացքում: Մինչ այդ Աստված միայն ունակություն է ունեցել խոսելու, ինչը հետագայում առարկայացել է, վերածվել իրապես խոսելու գործողության, և Աստված դարձել է խոսող, ճանաչող, իմացող, այսինքն՝ հավերժ կատարյալ չի եղել, այլ այդպիսին

<sup>21</sup> Paul's letter to the Muslims, p 10

<sup>22</sup> St'u, op.՝

فتح الباري بشرح صحيح البخاري، الجزء الحادي عشر، كتاب الدعوات، الحديث 6410، ص. 218

<sup>23</sup> Առավել մանրամասն տե՛ս

ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 3، ص 224

է դարձել ժամանակի ընթացքում: Իբն Թայմիան այսպիսի մոտեցումը միանգամայն անհեթեթ է համարում:<sup>24</sup>

3. Սուրբ Հոգու վերաբերյալ պարզաբանումներում հեղինակը նշում է, որ քրիստոնյաները Սուրբ Հոգուն, ում միջոցով աստվածային հայտնությունը տրվում էր մարգարեներին, նույնացնում են Աստծո կյանքի հետ, որը գոյություն ունի միայն նրա էության մեջ: Այստեղից նա եզրակացնում է, որ եթե Սուրբ Հոգին աստվածային հիպոստասներից մեկը լիներ, ապա մարգարեներից յուրաքանչյուրը պետք է աստվածային էություն ունենար և երկրպագվեր որպես աստված, մինչդեռ քրիստոնյաներն աստվածային էություն վերագրում են միայն Իսային:<sup>25</sup> Այս կերպ Իբն Թայմիան կրկին փորձում է ցույց տալ, որ քրիստոնեական ուսմունքները և դավանանքը սկզբունքորեն հակասում են նրանց իսկ հռչակած միաստվածական դրույթներին:

Իբն Թայմիան պնդում է, թե քրիստոնյաներն անհավասարության նշան են դնում Աստծո աստիքությունների միջև՝ առանձնացնելով երեքը, այն է՝ էությունը, խոսքը, կյանքը, և դրանք դիտարկում են որպես երեք հիպոստասներ, մինչդեռ աստվածային աստիքությունները շատ են, և դրանք երեքով սահմանափակելը սխալ է: Նա աստիքությունները նույնացնում է հիպոստասների հետ և պնդում, որ Աստծուն վերագրվող որևէ աստիքուտ կամ անվանում չի կարող մյուսներից առավել կամ պակաս կարևոր լինել, և սխալ է դրանցից միայն մի քանիսն առանձնացնելը: <sup>26</sup> Այստեղ հետևյալ հացն է առաջանում. չէ՞ որ Ղուրանում սուրաները սկսվում են باسم الله الرحمن الرحيم՝ «Բարեգութ և Գթասիրտ Աստծո անունով» բանաձևով, որտեղ նշվում են Աստծո միայն երկու անվանումները, այսինքն՝ մուսուլմաններն իրենք էլ առանձնացնում են երկու աստիքուտ և չեն նշում Ալլահի բոլոր անվանումները:

Աստվածային խոսքի մարմնավորումը Իսայի մեջ: Քրիստոսի՝ Աստծո խոսքը լինելու գաղափարին ի պատասխան իբն Թայմիան նշում է, որ Աստծո խոսքը կա նաև Թորայում, Ավետարանում, Ղուրանում, սակայն մուսուլմանները երբեք դրանց աստվածային էություն չեն վերագրել:<sup>27</sup> Նա հետևյալ հարցադրումն է առաջ քաշում. խոսքը, որ մարմնավորվել է Իսայի մեջ, աստվածային էություն ուներ, թե ոչ: Եթե խոսքն ունենար աստվածային էություն, ապա Իսան, ըստ

<sup>24</sup>Նշվ. աշխ., էջ 224-225

<sup>25</sup>Նշվ. աշխ., էջ 234

<sup>26</sup>Նշվ. աշխ., էջ 224

<sup>27</sup>ابن تيمية, الجواب الصحيح, مجلد 2, ص43



Իբն Թայմիայի, պետք է լիներ և՛ Հայրը, և՛ Որդին, և՛ Սուրբ հոգին, այսինքն՝ Աստված՝ երկու աշխարհների արարիչը: Սակայն դա չի համընկնում Աստծո վերաբերյալ քրիստոնեական ընկալումներին: Եթե խոսքը չուներ աստվածային էություն, ապա միայն հատկանիշ էր, իսկ հատկանիշը չի կարող գոյություն ունենալ առանց նրա, ինչին վերագրվում է: Բացի այդ, աստվածային հատկանիշը չի կարող ստեղծող ու արարող լինել, մինչդեռ Հիսուսն արարիչ էր: Այսպես, Իբն Թայմիան երկու տարբերակներն էլ ժխտում է՝ մերժելով նաև Քրիստոսի մեջ Աստծո խոսքի մարմնավորման գաղափարն առհասարակ:<sup>28</sup>

Աստծո կեցությունը Իսայի մարմնում: Եպիսկոպոսի նամակում ասվում է. «...Այս ճանապարհով Աստված երևաց Հիսուսի՝ Մարիամի որդու մարմնում, քանի որ մարդն Աստծո արարածների մեջ ամենավեհն է: Այդպիսով Աստված խոսեց մարդկանց հետ, և նրանք ականատես եղան այն ամենին, ինչ տեսան»: Իբն Թայմիայի մեկնաբանմամբ այս տողերում նկատի է առնվում աստվածային հայտնությունը, այն գիտելիքն ու լուսավորությունը, որ Աստված դնում է իր մարգարեների, առաքյալների, հավատացյալ ստրուկների սրտերում, սակայն դա չի նշանակում, որ աստվածային սուբստանցիան կարող է մարմնավորվել մարդկանց մեջ, ինչպես քրիստոնյաները պնդում են Հիսուսի պարագայում: Իբն Թայմիան եզրակացնում է, որ Աստծուց օրինություն, գիտելիք, լուսավորություն ստանալու առումով Իսան չի առանձնանում մյուս մարգարեներից:<sup>29</sup>

Իբն Թայմիան տրամաբանության վրա հիմնվելով փորձում է ցույց տալ, որ քրիստոնեական դրույթները համոզիչ չեն և կարող են օգտագործվել հենց իրենց դեմ: Այսպես, օրինակ՝ Աստծո մարմնավորման պնդումը միանգամայն անհիմն է համարում՝ հանգելով հետևյալ եզրակացության. մարդն Աստծո ստեղծած ամենակատարյալ էակն է, բայց Իսան չէ ամենակատարյալ մարդը, ուստի եթե մարմնավորումը տեղի ունենար, Աստված նրան չէր ընտրի, այլ կընտրեր առավել կատարյալ մարդու, ինչպես օրինակ Աբրահամին կամ Մուհամմադին, քանի որ նրանք յուրահատուկ տեղ են զբաղեցնում. Աստված նրանց տվել է ամենաբարձր դիրքը և տվել «խալիլ» ( خلیل՝ հատուկ ընկեր) անվանումը:<sup>30</sup> Դատողությամբ և

<sup>28</sup> Նշվ. աշխ., 173-174

<sup>29</sup> Առավել մանրամասն տե՛ս

ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 3، ص 332-336

<sup>30</sup> Նշվ. աշխ., էջ 350

տրամաբանությամբ քրիստոնեական որոշ դրույթների անհիմն լինելն ապացուցելու փորձի օրինակ է նաև Հիսուսի՝ միաժամանակ և՛ Աստված, և՛ առաքյալ (մարդ) լինելու վերաբերյալ նամակում տեղ գտած պնդումների հերքումը. «Եթե նա Աստված է, ապա չի կարող միևնույն ժամանակ առաքյալ լինել, եթե առաքյալ է, ապա չի կարող Աստված լինել (ինչպե՞ս կարող է ինքն իր առաքյալը լինել)... Երկու գոյերի մեկ բան դառնալն առանց միախառնվելու և որպես առանձին նյութ վերանալու հնարավոր չէ: Դրանք կարող են խառնվել՝ ինչպես ջուրը կաթի ու գինու հետ, դառնալ մեկ նյութ: Այդպես էլ տեսականորեն աստված կարող է դառնալ մարդ, իսկ մարդն՝ աստված, սակայն միևնույն մարմնի մեջ երկուսն առանձին չեն կարող գոյություն ունենալ»:<sup>31</sup>

Ղուրանական ուսմունքը Իսայի մասին: Իբն Թայմիան նշում է, որ Ղուրանն ուղարկվել է և՛ Ժխտելու, և՛ հաստատելու հրեական ու քրիստոնեական որոշ ուսմունքներ: Իսլամում նախորդ մարգարեներին ու նրանց հայտնություններին հավատալը հավատքի հիմնասյուներից մեկն է, սակայն քրիստոնյաները և հրեաները Ղուրանի՝ այդ մասին վկայող այաթները մեկնաբանում են իրենց արդեն աղավաղված ուսմունքների ճշմարտացիությունն ապացուցելու համար: Այսպես, Մայդայի մեյքիտ եպիսկոպոս Պողոսն իր նամակում բազմաթիվ մեջբերումներ է կատարում Ղուրանից՝ փորձելով դրանց միջոցով քրիստոնեական ուսմունքների առնչությամբ իրենց փաստարկները մուսուլմանների համար առավել հիմնավոր դարձնել: Դիտարկենք Իսայի վերաբերյալ Ղուրանից մեջբերվող հետևյալ հատվածը. «...Մասիհը՝ Մարիամի որդի Իսան, Ալլահի առաքյալն է, Նրա խոսքը՝ ուղղված Մարիամին, և մի Հոգի Նրանից...» (Ղ. 4:171): Եպիսկոպոսի մեկնաբանմամբ՝ այս հատվածը համապատասխանում է իրենց տեսակետին, քանի որ հաստատում է, թե Քրիստոսը մարդկային էություն էր ստացել Մարիամից, նա Աստծո Խոսքն էր, նրա Հոգին, որ միավորվել էր մարդկային էությանը:<sup>32</sup> Նամակում տեղ գտած մեկնաբանությունները, իհարկե, չեն համապատասխանում Ղուրանական տողերի իրական իմաստներին և համապատասխան թափախրներին, ինչպես նաև բաց են թողնվել Իսայի աստվածային էությունը հերքող և Երրորդությունը մերժող հատվածները. օրինակ 4-րդ սուրայի 171-րդ այաթում բաց է թողնվել մեջբերված հատվածի շարունակությունը, որտեղ ասվում է. «...Հավատացե՛ք Ալլահին ու Նրա առաքյալներին և մի՛ ասեք

<sup>31</sup> ابن تيمية, الجواب الصحيح, مجلد 2, ص. 46-48

<sup>32</sup> Paul's letter to the Muslims, p 3

«երրորդություն»: Ղադարե՛ք, քանզի այդպես ավելի լավ կլինի ձեզ համար: Ճշմարիտ, Ալլահը միակ Աստվածն է, Նա անբասիր է որդի ունենալու համար: Նրան պատկանում է այն, ինչ երկնքում է և այն ինչ երկրի վրա է: Բավական է այն, որ Ալլահը պահապան է» (Ղ. 4:171): Այս հանգամանքը հնտորեն օգտագործվում է Իբն Թայմիայի կողմից, ով հետևյալ հարցն է բարձրացնում. «Եթե Մուհամմադն իրոք մարգարե էր, իսկ նրա մարգարեությունը՝ ճշմարիտ, ապա քրիստոնեությունն իր ներկայիս տեսքով կեղծված է, իսկ եթե քրիստոնյաները չեն ընդունում Մուհամմադի մարգարեությունը, ապա ինչու՞ են իրենց ուսմունքի ճշմարտացիությունը ապացուցելու համար մեջբերումներ անում նրա ասածներից»:<sup>33</sup>

Նամակում բերված փաստարկներին պատասխանելիս Իբն Թայմիան կրկին մեջբերում է նույն այբթները և հանգամանորեն բացատրում դրանք: Մասնավորապես կտրուկ կերպով հերքում է այն պնդումները, թե Մուհամմադը խոսել է Իսայի աստվածային և մարդկային էությունների մասին: Մեջբերելով համապատասխան այբթներ (Ղ. 5:17, 5:72-77, 9:30-34, 43:57-65, 5:116-117)՝ Իբն Թայմիան ցույց է տալիս, որ Մուհամմադն իր քարոզներում հաստատել է Իսայի մարգարեական առաքելության ճշմարտացիությունը, և շեշտում, որ վերջինս մարդկանց է փոխանցել միայն աստվածային հայտնությունները և պատասխանատվություն չի կրում մարդկանց կողմից դրանց նենգափոխման համար:<sup>34</sup>

Որոշ ուսումնասիրություններում նշվում է, թե Քրիստոսի և Աստծո խոսքի հարաբերակցության վերաբերյալ Իբն Թայմիայի պնդումները չեն համապատասխանում ոչ քննադատվող քրիստոնեական, ոչ էլ իսլամական ավանդույթին:<sup>35</sup> Հարկ է նշել, որ իր փաստարկները շարադրելիս Իբն Թայմիան թեև չի հակասում Աստծո խոսքի և Իսայի վերաբերյալ դուրանական պատկերացումներին, սակայն չի էլ անդրադառնում դրանց, նա պարզապես տարբեր տեսանկյուններից ժխտում է Քրիստոսի մեջ Աստծո խոսքի մարմնավորման գաղափարը: Ղուրանում, ինչպես արդեն նշվել է, ասվում է հետևյալը. «...Իսա իբն Մարիամը Ալլահի առաքյալն է, Նրա խոսքը՝ ուղղված Մարիամին...» (Ղ. 4:171): Ինչու՞ խոսքը, որովհետև, իսլամական ավանդույթի համաձայն, Իսայի արարման համար

<sup>33</sup> ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 2، ص 43-42  
<sup>34</sup> ابن تيمية، الجواب الصحيح، مجلد 4، ص 32-27

<sup>35</sup> Տե՛ս, օր.՝ Roberts N., նշվ. աշխ., էջ 354

բավարար է եղել Աստծո մեկ խոսքը. Ալլահն ասաց՝ եղիր, և նա եղավ:<sup>36</sup>

Աստծո միավորումը արարածի հետ: Իրն Թայմիան փորձում է ցույց տալ, որ Աստծո և արարածի միավորման քրիստոնեական ընկալումն արտահայտող ձևակերպումից կարելի է եզրակացնել, թե Աստված արարածների կարիքն ունի և կախված է նրանցից: Դա բացատրում է հետևյալ կերպ. Քրիստոսը միավորում է մարդկային և աստվածային էությունները, այլ կերպ ասած՝ նրա անվան տակ միավորվել են Արարիչն ու արարածը: Մարդկային էությունը հիմք է հանդիսացել Աստծո արարող խոսքի երևան գալու համար: Ցանկացած սուբստանցիա, որը գոյություն ունի այլ էության մեջ, կախված է դրանից: Եթե Արարչի սուբստրատը արարածն է, ապա դրանից հետևում է, որ Արարիչն ու արարածը գոյություն ունեն մեկը մյուսի միջոցով, գոյության համար միմյանց կարիքն ունեն, ինչը, ըստ Իրն Թայմիայի, անարգանք է Աստծո նկատմամբ: Դուրանում նշվում է, որ Աստված անկախ է աշխարհներից և չունի արարածների կարիքը. «Նա, ով մարտնչում է, մարտնչում է հոգուտ իրեն: Աստված, հիրավի, աշխարհների կարիքը չունի» (Դ. 29:6): Իրն Թայմիան Աստծո և արարածի միավորման գաղափարի սեփական մեկնաբանությունն է առաջարկում, համաձայն որի Աստծո նկատմամբ հավատը, գիտելիքն ու լույսն են հաստատվում հավատացյալների սրտերում, ինչի շնորհիվ վերջիններս փոխաբերական իմաստով միավորվում են Աստծո հետ:<sup>37</sup>

Այսպիսով, հետազոտության արդյունքում կարող ենք արձանագրել հետևյալը.

1. Իրն Թայմիայի համոզմամբ քրիստոնյաների գործունեությունը հանգեցրել է Ավետարանների աղավաղմանը, ինչի արդյունքում կրոնի ներսում ձևավորվել են հայտնությանը հակասող դավանանքներ և ուղղություններ:

2. Իրն Թայմիան հավատարիմ է մնում Իսայի մարդկային էության, երկրային կյանքում կատարած առաքելական գործունեության, հրաշքների, նրա մարգարեության, երկրորդ գալստյան, աշխարհի վերջին նախորդող իրադարձությունների շղթայում նրան վերապահված դերակատարության վերաբերյալ Դուրանով և Սուննայով ամրագրված դրույթներին:

3. Իրն Թայմիայի որոշ մեկնաբանություններ չեն համապատասխանում ո՛չ Աստվածաշնչին, ո՛չ էլ Դուրանին, քանի որ սեփական մեկնաբանություններն ու փաստարկները կազմելիս

<sup>36</sup> تفسیر الجلالین، سورة العمران: الآية 59، ص. 36  
<sup>37</sup> ابن تیمیة، الجواب الصحیح، مجلد 4، ص 204

հաճախ անտեսում է ոչ միայն քրիստոնեական դրույթներն ու դրանց ճիշտ մեկնաբանությունները, այլև իսլամական սկզբնաղբյուրներում հանդիպող պարզաբանումները, կամ դրանց ակնհայտ սխալ լինելու դեպքում պարզապես չի անդրադառնում:

4. Աստվածաշնչյան որոշ չափազանց կարևոր դրույթներ և հատվածներ Իբն Թայմիան մեկնաբանում է հարմարեցնելով իսլամական ավանդույթին և, Ղուրանից մեջբերումներ կատարելով, փորձում է ցույց տալ դրանց մտացածին լինելը:

5. Քրիստոնեական ուսմունքների սեփական ընկալումից ելնելով Իբն Թայմիան տալիս է դրանց «տրամաբանական» և, իհարկե, միանգամայն սխալ շարունակությունը և տարբեր տեսանկյուններից մերժում իր իսկ եզրակացությունները:

6. Իսլամական հայեցակարգերը մեկնաբանելիս և հակաքրիստոնեական բանավեճերում իր հայացքները հիմնավորելիս Իբն Թայմիան առաջնորդվում է հետևյալ մեթոդաբանությամբ.

- Մանրակրկիտ կերպով քննարկում է իսլամի տեսանկյունից քրիստոնեության մեջ արմատացած շեղումները:

- Իր մեկնաբանությունները հիմնավորում Ղուրանից և Սուրնայից, ինչպես նաև Թորայից և Ավետարաններից մեջբերումներ կատարելով:

- Հիմնվում է նաև տրամաբանական մտածողության վրա:

7. Կրոնական դրույթները քննարկելիս խոսում է որոշակի չափանիշների կարևորության մասին, թեև, ինչպես ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, ոչ միշտ է հետևում դրանց: Այսպես՝ շեշտում է մարդկային մտքի և տրամաբանության ստորադաս լինելը հայտնությանը և այն համարում է աստվածային գիտելիքի միակ աղբյուր: Պնդում է, թե մարդկային միտքը, բանականությունը անհրաժեշտ են միայն մաքուր իսլամը ճիշտ ընկալելու և մոլորությունից զերծ մնալու համար: Գործնականում, սակայն, բանավեճերում սեփական պնդումների ճշմարտացիությունը և քննադատվող դրույթների անհիմն ու մերժելի լինելն ապացուցելու համար որոշ փաստարկներ հիմնավորելով բացառապես ռացիոնալ մտքով ու տրամաբանությամբ՝ հաճախ անտեսում է ինչպես աստվածաշնչյան տողերի ճիշտ բացատրությունները, այնպես էլ դուրանական այաթները:



## **ОТВЕРЖЕНИЕ БОЖЕСТВЕННОЙ СУЩНОСТИ ХРИСТА И ДОГМАТА СВЯТОЙ ТРОИЦЫ НА ПРИМЕРЕ «КИТАБ АЛЬ-ДЖАВАБ» ИБН ТАЙМИЙИ (1263-1328)**

*Седа Тиграян  
Резюме*

На протяжении долгой традиции мусульманской антихристианской полемики две наиболее важные темы, Божественность Христа и Святая Троица, были в центре полемической литературы и дискуссий. Аргументы мусульманских авторов основывались на концепции тахрифа, согласно которой евреи и христиане исказили Священное Писание и отклонились от правильного пути. Основная цель мусульманских авторов было восстановление чистого ислама через обсуждение ошибок христианства. Среди других известных средневековых религиоведов выделяется Ибн Таймийя, который не только систематизировал антихристианскую полемическую литературу своего времени, но и выдвигал собственные уникальные подходы и интерпретации. В этом исследовании делается попытка на примере “Китаб аль-Джаваба” Ибн Таймийи указать аргументы, представленные в антихристианской полемике, восприятия христианских концепций в средневековых мусульманских источниках, показать их соответствие, несоответствие библейским текстам, а также выявить методы обоснования этих аргументов и противопоставления их христианству.

Аргументы Ибн Таймийи основаны на убеждении, что Троица противоречит не только божественному откровению, но и учению Исы, поскольку исламская традиция признает пророчество Исы и отрицает его божественную природу. Одним из основных выводов исследования является то, что, обосновывая свои собственные комментарии и аргументы, Ибн Таймийя часто игнорирует не только христианские положения и их правильные интерпретации, но и объяснения, найденные в исламских источниках, или просто не ссылается на них, если они очевидно ошибочные.